ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1631 29.04.2016թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը սույն թվականի ապրիլի 27-ին այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Շիրակի ՄՎ Արթիկի բաժնի ՁՊՎ, արձանագրել է, որ

Թերություններ՝

1. Սանհանգույցի լվացարանը գտնվում էր պոկված վիճակում և շարժվում էր:
2. Սննդի տաքացման սենյակում բացակայում էր աման լվանալու սպունգը:

Խախտումներ՝

1. Ա. Ք.Բ-ն ՁՊՎ է ընդունվել 13.01.2016թ-ին ժամը 18.25-ին: Ա.Բ-ին ՁՊՎ ընդունելու համար հիմք է հանդիսացել քննիչի կալանավորված անձին ՁՊՎ-ում պահելու մասին որոշումը: Այն դեպքում, երբ նշված անձը կալանավորված չի եղել, այլ եղել է մեղադրյալ հետախուզվող, որին բերման ենթարկելու առաջին իսկ րոպեից պետք է ձերբակալեին, այնուհետև 72 ժամվա ընթացքում տեղափոխեին դատարան նոր խափանման միջոց կիրառելու, և միայն խափանման միջոց կիրառելուց հետո տվյալ անձը կհամարվեր կալանավորված անձ:
   Արդյունքում՝ Ա.Բ-ն առանց օրենքով պահանջվող համապատասխան փաստաթղթերի է ընդունվել ՁՊՎ և պահվել այնտեղ:

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏՈՒ № 2184
03 05 2016 թ.

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄՏՈՒ № 2811
02 05 2016թ.

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60, Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացրածը և տալ մեկնաբանություն:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Հիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60,
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

0025 ք.Երևան, Նալբանդյան 130, Հեռ.՝ (010) 59-65-94, Ֆաքս՝ (010) 59-63-11, էլ.փոստ staff@police.am

№ 212-1-1316 «26» 05 2016 թ.

Ձեր 26.04.2016թ. թիվ 2621/1629 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2016թ. ապրիլի 27-ին ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Արթիկի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերություններն և խախտումներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Շիրակի մարզային վարչությունում կատարվել է ստուգում, որի արդյունքներով տրվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

1-ին և 2-րդ կետերում նշված թերություններն արդեն իսկ վերացվել են:

Ա.Բ.-ն 05.01.2016թ. ՀՀ ՔԿ Շիրակի մարզի քննչական վարչության Արթիկի քննչական բաժնում քննվող քրեական գործի շրջանակներում ներգրավվել է որպես մեղադրյալ և նրա գտնվելու վայրը հայտնի չլինելու պատճառով վերջինիս նկատմամբ հայտարարվել է հետախուզում, իսկ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ Ա.Բ-ի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

13.01.2016թ. Ա.Բ.-ն հայտնաբերվել և բերման է ենթարկվել ՀՀ ՔԿ Արթիկի քննչական բաժին:

Հաշվի առնելով, որ 05.01.2016թ-ին դատարանի կողմից Ա.Բ-ի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ քննիչը, ղեկավարվելով <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի 7-րդ կետի պահանջներով, որոշում է կայացրել Ա.Բ.-ին որպես կալանավոր ընդունել ոստիկանության Արթիկի բաժնի ՁՊՎ, ինչի հիման վրա էլ Ա.Բ.-ն ընդունվել է ՁՊՎ:

Այսպիսով, Ա.Բ.-ն ՁՊՎ է ընդունվել օրենքով սահմանված կարգով և հիմքով, իսկ քննիչի կողմից կայացրած որոշման հետ համաձայն չլինելու դեպքում առաջարկվում է դիմել ՀՀ քննչական կոմիտե:

ՀՀ ոստիկանության շտաբի ՀԾՎ